ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

« 12 » օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-27/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությամբ ներկայացված «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01807812) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.12.2015թ. թիվ ԴՎԱ/2928 գրության հիման վրա, 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

(այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 02.03.2016թ. թիվ 01/04.1/759-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (14.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն կարող է ներառվել Ցուցակում:

Միաժամանակ, նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությամբ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը, առաջարկել է Կենտրոնին նախաձեռնել «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 25.12.2015թ. թիվ 01/04.1/3882-15 գրությամբ դիմել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին:

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն 13.01.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով պահանջվել է առնվազն 100 մ² տարածք: Ընկերությունը գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը բավարարել է հրավերով սահմանված պահանջներին, սակայն Պատվիրատուն մերժել է Ընկերության հայտը՝ նշված պահանջը չբավարարող որակավորման փաստաթղթեր ներկայացնելու հիմքով: Ընկերությունը չհամաձայնելով Պատվիրատուի կողմից կայացված նման որոշման հետ, գրավոր բացատրություն է ներկայացրել վերջինիս, սակայն Պատվիրատուի կողմից կայացված որոշումը մնացել է անփոփոխ:

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն գտել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր չկան:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 07.12.2015թ. թիվ ԴՎԱ/2928 գրությամբ հայտնել է, որ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանում

հրավերով սահմանված պահանջներին, որոնց հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

4. ՍՑ-ԳԲԽ-27/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությամբ ներկայացված «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով ***14.10.2015թ.*** հայտ է ներկայացրել նաև «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն:

3. Ընկերությունը հայտի N 3.2 հավելվածով՝ տեխնիկական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***Ընկերությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:***

Ընկերությունը պարտավորվել է Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ ***մասնակցի սեփականության կամ***

ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.10.2015թ. ժամը 09:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, ***մասնավորապես, հրավերով պահանջվում էր 2 հատ չորացնող սարք, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 1 հատ, բացի այդ, որպես արտադրամասի առկայության հավաստում ներկայացվել է տարածքի վարձակալության պայմանագիր, որը նոտարական վավերացում չունի, իսկ տարածքի վարձակալության կամ սեփականության վկայականն ընդհանրապես բացակայում է:***

Ուստի, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից, որպես տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է ՀՀ քաղաքացի Անդրանիկ Համբարյանի, Կարինե Իսկոյանի և «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի միջև ***30.10.2015թ. նոտարական վավերացում ստացած անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ առանց նշված պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման վկայականի:***

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2015թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով մերժել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի հայտը հետևյալ հիմնավորմամբ. ***««Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված որակավորման փաստաթղթերը, որը սակայն թերի էր: Մասնավորապես՝ ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության վկայական 94.1 մ² մակերեսով, սակայն հրավերով պահանջվում էր ոչ պակաս 100 մ²: <u>Բացի այդ, ներկայացվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ կնքված 2015թ. հոկտեմբերի 30-ին, մինչդեռ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հոկտեմբերի 14-ին, որի</u>***

Հավելված 3.2-ով ներկայացրել է հայտարարություն, որ կազմակերպությունն ունի հրավերով նախատեսված տեխնիկական միջոցները և պարտավորվում է 1-ին տեղ զբաղեցնելու դեպքում ներկայացնել փաստաթղթերը, որոնց հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի հայտը»:

8. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.03.2016թ. թիվ 01/04.1/759-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

9. Ի պատասխան Կենտրոնի 02.03.2016թ. թիվ 01/04.1/759-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությամբ, հիմք ընդունելով Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ պահանջել է նախաձեռնել «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

10. Ընկերությունը 20.05.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով խնդրել է ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.11.2015թ. տեղի ունեցած նիստի N 5 արձանագրային որոշումը ճանաչել ոչ իրավաչափ և վերացնել:

12. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 07.06.2016թ. կայացրած որոշմամբ մերժել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 20.05.2016թ. ներկայացրած բողոքը:

5. ՍՑ-ԳԲԽ-27/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2015թ. թիվ 1/73-1/41370-15 և 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությունները, ՀՀ պաշտպանության

նախարարության 07.12.2015թ. թիվ ԴՎԱ/2928 գրությունը և կից փաստաթղթերի պատճենները, «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 13.01.2016թ. գրությունը, հայտնում է հետևյալը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և ***այլ գույքային իրավունքները***, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, ***օգտագործման իրավունքը,*** հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

Օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է:***

Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն պայմանագիրը, ***որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:***

Օրենսգրքի 611-րդ հոդվածը սահմանում է, որ ***անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 66-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է վարձակալության պայմանագիրը կնքված և դրանից ծագող վարձակալության իրավունքը ծագած համարելու հետևալ երեք պայմանները.

1) վարձակալության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր.

2) վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման.

3) վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Հետևաբար, Օրենսգիրքը սահմանում է երեք պարտադիր պայման՝ վարձակալության պայմանագրի կնքման ձևը պահպանված համարելու համար:

Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերության կողմից Պայմանագիրը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից պահպանվել են վարձակալության պայմանագրի կնքման ձևի առաջին երկու պայմանները, սակայն չի պահպանվել երրորդ՝ պետական գրանցման ենթարկելու պայմանը:

Մինչդեռ, վերը նշված հոդվածներն ուղղակիորեն սահմանում են, որ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը համարվում է կնքված՝ նշված պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկելու պահից: Այսինքն, Կողմերի միջև ստորագրված և նոտարական վավերացում ստացած անշարժ գույքի վարձակալության պայմանագրի հիման վրա վարձակալության իրավունքը ծագում է, երբ այն ենթարկվում է պետական գրանցման: Ավելին, ըստ վկայակոչված հոդվածների, իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության և նման գործարքն առոչինչ է:

Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացվել է գրավոր ձևակերպված և 30.10.2016թ. նոտարական վավերացում ստացած անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքները դեռևս ենթարկված չէին պետական գրանցման:

Հետևաբար, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ և 611-րդ հոդվածներով սահմանված դրույթների՝ Ընկերության կողմից ներկայացված Պայմանագիրը, ըստ էության, չի կարող համարվել կնքված, քանի որ չի պահպանվել Օրենսգրքով սահմանված վարձակալության պայմանագրի կնքման ձևը:

Ընկերությունը Գնումների բողոքարկման խորհրդին 20.05.2016թ. ներկայացրած բողոքի մեջ ձևակերպել է հետևյալ միտքը. **«գույքային իրավունքների՝ ներառյալ սեփականության իրավունքի, պետական գրանցման բացակայությունը, չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի մոտ սեփականության իրավունքի առկայությունն արձանագրելու համար, եթե կողմը ձեռք է բերել այնպիսի գույքային պահանջ, որի իրականացումն իրավաբանորեն հնարավոր է:»:**

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը գնում է այնպիսի գույքային պահանջի մասին, որի իրականացումն իրավաբանորեն հնարավոր է, ***բայց ոչ պարտադիր, հետևաբար Պատվիրատուն չէր կարող որևէ երաշխիք ունենալ, որ Ընկերությունը կպահանջի Վարձատուից պետական գրանցման ենթարկել վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները:***

Ուստի տվյալ դեպքում Պատվիրատուն չէր կարող կանխատեսել, թե Ընկերությունն արդյոք կպահանջի Վարձատուից ապահովելու Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը, ինչպես նաև արդյոք Վարձատուն կիրականացնի Ընկերության պահանջը:

Հետևաբար Ընկերության այն պնդումը, համաձայն որի անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման բացակայությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի մոտ սեփականության իրավունքի առկայությունն արձանագրելու համար, պետք է համարել չհիմնավորված, որովհետև Օրենսգիրքը հստակ սահմանում է անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ձևը, որը չպահպանելու դեպքում այն չի կարող համարվել կնքված:

Միևնույն ժամանակ, համաձայն Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության՝ ***սեփականության իրավունքը*** սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ ***իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:***

Հետևաբար, վարձակալության իրավունքը չի կարող նույնացվել սեփականության իրավունքի հետ, քանի որ վարձակալության իրավունքն իր մեջ ներառում է միայն ուրիշին պատկանող գույքի ժամանակավոր տիրապետումը և օգտագործումը, մինչդեռ սեփականության իրավունքն իր մեջ ներառում է անձի կողմից իրեն պատկանող գույքի և տիրապետումը, և օգտագործումը, և տնօրինումը:

Այսպիսով, թե Օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասը և թե 611-րդ հոդվածը, ուղղակիորեն սահմանում են, որ այն գործարքը, տվյալ դեպքում վարձակալության պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, համարվում է կնքված այդ իրավունքի պետական գրանցման պահից: Հետևաբար վարձակալության պայմանագիրը համարվում է չկնքված, քանի դեռ դրանից ծագող իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման: Հետևաբար Ընկերության կողմից իր

հայտի թիվ 3.2 հավելվածով ներկայացրած հայտարարության հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրած Պայմանագիրն օրենքի ուժով համարվում է չկնքված, ուստի չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանքներ, քանի դեռ այն չի ենթարկվել պետական գրանցման:

Միևնույն ժամանակ Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից որպես որակավորման պահանջները հիմնավորող փաստաթուղթ ներկայացված Պայմանագիրը չի կարող համարվել հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթուղթ, քանի որ Ընթացակարգի հրավերով պահանջվում էր, որ մասնակիցը ներկայացնի ***տեխնիկական միջոցի նկատմամբ իր սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները, սակայն տեխնիկական միջոցի նկատմամբ Ընկերության ժամանակավոր օգտագործման իրավունքն օրենքով սահմանված կարգով, Պայմանագիրը ներկայացնելու օրվա դրությամբ ենթարկված չի եղել պետական գրանցման:***

Մինչդեռ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.3 ենթակետի համաձայն տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ ***Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:***

Պայմանագրի կատարման համար պահանջվող մի շարք տեխնիկական միջոցների հետ մեկտեղ հրավերով նախատեսվել է նաև ներկայացնել արտադրական նշանակության արտադրամաս /տարածքում նաև՝ պահասենյակներ՝ կահավորված դարակաշարերով, կեղտոտ և մաքուր սպիտակեղենի պահպանման համար/ 100 մ^2 ոչ պակաս մակերեսով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությանը սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված Ընթացակարգին 14.10.2015թ. ներկայացրած մասնակցության հայտի 3.2 հավելվածով՝ տեխնիկական միջոցների հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ

Ընկերությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը և նշված հավելվածով պարտավորվել է Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերության կողմից որպես հայտի թիվ 3.2 հավելվածով ներկայացված տեխնիկական միջոցների վերաբերյալ հայտարարությունը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացվել է ***30.10.2015թ. նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ առանց պետական գրանցման:***

Հետևաբար, Ընկերության կողմից հայտի թիվ 3.2 հավելվածով ներկայացված հայտարարությունը **չի կարող դիտվել որպես իրականությանը համապատասխանող,** չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրի 3.1.-րդ ենթակետով նախատեսվել է, որ այն տարածվում է նաև կողմերի միջև 01.10.2015թ. ծագած հարաբերությունների վրա, այնուամենայնիվ, ինչպես վերը արդեն նշվել է, Ընկերության կողմից ներկայացված Պայմանագիրն օրենքի ուժով չի կարող համարվել որպես կնքված, ուստի խոսք չի կարող գնալ Պայմանագրի դրույթների իրավական ուժի մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից 14.10.2015թ. հայտով ներկայացրած N 3.2 հավելվածը՝ տեխնիկական միջոցների մասին հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

• *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-27/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (14.10.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.03.2016թ. թիվ 01/04.1/759-16 գրությամբ, արձանագրելով «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, խնդրել է Նախարարությանը Ընկերության անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված Ընկերության կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Մինչդեռ, ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-27/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելն առկա չէ որևէ տեղեկատվություն «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 14.10.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 03.03.2016թ. թիվ 1/73-1/8168-16 գրությամբ ներկայացված «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01807812) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-27/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան